# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **18 փետրվար 2026թ.**

2026թ. փետրվարի 17-18-ը՝ ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Յ. Պետրոսյան — Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի քարտուղարության պետ,

Լ. Պետրոսյան — Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի քարտուղարության ավագ մասնագետ,

Ռ. Բաղդասարյան — Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բյուջետավորման և գնումների բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Յ. Պետրոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՏՔ № 3854
«18» 02 26

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվար 17-ին, ՀՀ, ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | բջջային հեռախոսների ծառայություններ | 1,200,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվարի 17-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվարի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. 2026թ. փետրվարի 5-ին Ընթացակարգի հրավերում կատարվել է փոփոխություն:
2. 2026թ. փետրվարի 5-ին Գնման վերաբերյալ ներկայացվել է հարցում, որին 2026թ. փետրվարի 5-ին տրվել է պարզաբանում, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Յ. Պետրոսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Պետրոսյան ____________

Ռ. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________